

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Պետրոս Բռնեյի :

Ինչպէս որ անցած ամսուան Բազմավէպիս մէջ խոստացանք՝ այս քերթողիս ողբերգութեանցը մէկ պզտի ճաշակ մը տալու , հոս ահա կը կատարենք՝ իր Պողիկտոսի ողբերգութեանը մէկ մասը դնելով :

Պողիկտոս արքայազուն Հայ իշխանսը՝ Փեղքս հռովմայեցի Հայաստանի Առաքելալին փեսայացած ըլլալով՝ Պաւլինէ անոր աղջիկը առեր էր իրեն կնուծեան , զորն որ Սեւերոս հռովմայեցին ալ ուզեր էր ու հայրը Փիլիքս չէր տուած : Սէկ քանի տարի ետքը՝ Պողիկտոս Նէարխոնի իր սիրելի բարեկամին ձեռքովը քրիստոնէայ կ'ըլլայ , ու Փեղքս կուսակալին կուոյ տաճարը զոհ մատուցանելու ատենը կուռքերը կը

կործանեն , որուն համար Նէարխոնը մահուան կը դատապարտուի ու մարտիրոսութեան պսակը կառնու . իսկ Պողիկտոս՝ Փեղքսի փեսան ըլլալով՝ նոյն բարեբաղդութիւնը մէկէն չունենար , այլ կը բռնուի բանտը կը դրուի , ուր աները Փեղքս ու իր կինը Պաւլինէ , ուզելով որ ապրեցնեն զինքը , կաշխատին կը յորդորեն որ ուրանայ զքրիստոնէութիւնը : Բայց Պողիկտոս հաստատ կենալով իր ճշմարիտ դաւանութեանը վրայ՝ զՊաւլինէ մանաւանդ կը յորդորէ ի քրիստոնէութիւն , և վերջապէս իր նահատակութեամբ կը լուսաւորէ զՊաւլինէ ալ ու Փեղքսն ալ՝ որ կը դառնան ի քրիստոնէութիւն : Բայ է բովանդակ ողբերգութեանը նիւթը , որուն հոս դրուածը մէկ մասն է միայն , Պողիկտոսի բանտին մէջ մահուան վճիռը եղած՝ Պաւլինէի հետ տեսութիւնը :

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա .

Պողիկտոս , Կդեոն և Կրեք զօրականք :

Պող . Ո՛վ դք իցէ , ի՛վ պահապանք :

Կդե .

Պաւլինէ քեզ ՚ի տես գայ :

Պող . Ո՛վ տեսութիւն , մարտ ահարկու ինձ քան զամենն այս ահա :

Ի՞նչքեզ , Փեղքս , ՚ի բանտի աստ տեսի ՚ի սիրտ անվէհեր ,
 Դադը ըզսաստիւք քովք արարեալ յաղթող ՚ի մարտ և անվէր ,
 Ընդ դու ՚ի վրէժ դրդես այլ մարտ՝ ազդողագոյն առեալ զէն
 Ո՛յր արտասուքն ինձ քան զդահաւոյ ըսպառնալիս ահեղք են :

Դու Տէր իմ Տէր , որ զվերահաս տեսանես զիմ զայս վրտանգ ,
 Ըջ կորովի տուր ինձ , մաղթեմ , տաքնապ ժամուս յօժընդակ :
 Եւ որ դեռ ևս յասպարիսէ մարտիդ ելեալ յաղթական ,
 Պրսակազարդ հայիս յերկնից յայս իմ փառաց մըրցարան ,
 Դու սիրեցեալդ իմ , Նէարխոն , լիցիս և դու ձեռնտու
 Բարեկամիդ քո ինձ այսօր ՚ի գոռ մարտիս այս հուժկու :

Ըղէ պահպանք , թէ ժըխտիցէք ըսպաս ինչ ինձ հարկանել .

Ոչ թէ խուսել ինչ հընարիմ պատուհասէս յանընդել :

Բաւ առ յինէն այդ վատութիւն թ' ի ձէնջ փախուստ ինդրեցից ,

Ըյլ զի շատ է ՚ի զգուշութիւն կալ ինձ ՚ի պահ ձեր երից ,

Չորրորդդ ինձ մեծ առնէ շընորհ թէ ՚ի խընդիր Սեւերեայ ,

Օ՛ր ոչ կարծեմ գոլ դըժպատեհ , առ ՚ի հաճել զիս երթայ :

Թէ զկարեւոր ինչ զիմ դաղտնիս ասել նրմա կարացից ,
 Բարեբաղդ նա կեցցէ յետ իմ և ես մեռայց ինդալից :
 Կդէ . Թէ այդպէս ինչ հրաման է քո՝ ահաւասիկ երթայց ես :
 Պող . Թէ մահ ինձ ոչ ներէ , Սէւեր վարձահատոյց լիցի քեզ .
 ()ն երթ ապա , մի դանդաղիր , և ճեպեսցիս այսր 'ի դարձ :
 Կդէ . Յական քրթթել թռուցեալ , սլ տէր , դառնալ առ քեզ փութացայց :

ՏԵՍՍՐԱՆ Բ .

Պողիկոսս ծռեր եղեալ .

և Պահապանք 'ի մի կողմն մեկնեալք :

Բերկրութեանց աղբերք , աղունց յոգնասեր
 Պատրող հեշտութիւնք , զի կայ իմ և ձեր .
 Սարմնոյ աշխարհի սէր ամօթապարտ ,
 Ի՛նչ լըբեալք յինէն՝ ոչ թողուք զիս ցարդ .
 ()ն անդր 'ի բացէ հեշտութիւնք , պատիւ
 Որք ինձ դիմամարտ վառիք 'ի կրօն .

Սայեւք ձեր համայն
 Չեն ինչ մընայուն
 Բան քրթթել ական .
 Օ երթ նուրբ ապակի
 Թէպէտ և փայլուն ,
 Լալ վաղ խորտակի :

Չեզ ոչ տենչացայց , յոյս ձեր 'ի դերեւ
 Ի հրապոյրս անզօր ոգորիք թէեւ .
 Օ աստուածամարտին ընդ ոլորտս երկրի
 Օ ուր ցուցանէք ինձ ըզփառսն յոր բերկրի .
 Ինդուստ և Երկինք ցուցանեն փոխան
 Օ արդար վըրիժուց նոցուն դատաստան ,
 Որով գահավէժ
 Գողողք տան ըզվրէժ .
 Հարուած սուսերին
 Կախեալ ըզգլխով
 Սէգ անօրինին ,
 Իջանէ յանկարծ
 Սինչ կայն ապահով ,
 Ոչ ունայն 'ի դարձ :

Խուժաղուժ Գեկոս , վազր արինարբու ,
 Բարձրեալն 'ի քո ձեռս զիւրսըն թէ թողու ,
 Օ երջանիկ բախտիդ զահաւոր վախճան
 Սայրիկ մի այլ ևս՝ տեսցես քեզ ժաման .
 Սրիժառուն Բսկիւթ ահա ըզՊարսից
 Գայ խընդրել ըզքէն զարեան վըկայից .
 Փըրկութիւն քեզ չիք
 Շայթեցին յամպոց
 Երկնասաստ շանթիք ,
 Ինկըրկին ոչ ևս

Ի զեղջ և 'ի կոծ
Թէ և աշխարես ,
Եւ ցասման քո սպանդ Փելիքս զիս զենու ,
Օ աշխարհ շըլացոյց նախանձորդն հուժկու .
Թող արեամբս ըզնա կալցի իւր փեսայ ,
Եւ ծառայաբար մարզիս տիրանայ :
Ոչ ինչ դրժկամակ լինիմ ես ընդ այն .
Եւ ես իմ տենչանք , ըղձանամ մահուան :
Ոչ ևս ինչ առ իս
Եւ շխարհ դու ունիս .
Չոն բոլորանուէր
Սիրտն իմ Յիսուսի
Շէնճերի 'ի սէր .
Եւ զինչ Պաւլինէ ,
Բայց բարույս Թըւի
Ստան յայսմ հետէ :
Ո՛վ վըսեմ խորհուրդք և սուրբ հեշտութիւն
Որ գրաւեալ ըզսիրտ , ընուք պատարուն .
Ի սուրբ ձեր հրապոյրս ըզմայլեալ հոգի
Յէիցս 'ի տեսիլ ոչ պարանեսցի .
Փարթամք 'ի խոստմունս և փարթամագոյն
Ի տուրս պարգեաց տայք դուք լիութիւն :
Սայելքդ յամերսմ ,
Եւ մահն երջանիկ
Որում ըղձանամ՝
Բուն է անուշիկ ,
Եւ անցք 'ի հաճոյս
Օ որ պատրաստեցիք
Սեզ յանեղբ 'ի լոյս :
Ո՛վ աստուածավառ հուրդ անշիջական ,
Բեւ ըզՊաւլինէ տեսից անսասան . . .
Եւ տեսանեմ , և վառ 'ի սուրբ սէր
Չըզգայ սիրտս 'ի գեղն որով հարեալն էր .
Եւ իմ պատարուն լուսովն երկնային
Յաջացն 'ի շողիւն ոչ ինչ բըլաւնին :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Պողիկտոս , Պաշիկե :

- Պող . Եւ ինչ , Տիկին , գալուստդ այսրէն , մարտ ինձ ազդէ Թէ խրախոյս .
Չըքնաղ սիրոյդ 'ի պերճ հանդէս ընկճել զիս գիտ Թէ յիմ կոյս .
Ետելութիւն առեալ բերես , Թէ զհաշտութեան սուրբ ըզսէր .
Պէս Թնամուոյ դիմեալ առ իս՝ Թէ ցանկալի իմ ընկեր :
Պաշ . Բեզ Թնամի չիք բաց 'ի քէն . դու զինքդ ատեաս , այլք սիրեն .
Դու և զերազն իմ՝ միայն դու ճըլմարտես մեզ համօրէն :
Ս'ի 'ի կորուստ քո դիմագրաւ , կամեաց և եթ և կեցցես ,
Թէպէտ եղեոն ոճիւրդ իցեն՝ խնայեա 'ի քեզ , անպարտ ես :

- Յուշ քեզ լիցին որո՞ց յերակարգ խոխոջայ պերճ՝ արիւն ,
 Վաջարուծեանցը քոց հանդէսք , չըքնաղ ձրից պերճուծիւն .
 Բնաւից դու սէր ժողովրդեան , մեծարու գոս առ արքայ ,
 Եւ կուսակալ մեծի մարզիս իշխեցողին ես փեսայ :
 Չյիշեմ ինչ զիմ քեզ հարսնուծիւն , որ ինձ բաղդ մեծ , քեզ չէ ինչ .
 Եւլ արուծիւնք քո , զարմըքեղ և զօրուծիւն , տես դու ինձ
 Օր տան մեզ յոյս , և մի թողուր դահճաց 'ի ձեռս անձնատուր ,
 Օր խոստանայն բաղդ գեղեցիկ արդար ըղձից մեր 'ի լուր :
 Պող . Ինձ առաւելն է իսկ ծանօթ . ըզպարծանսն իմ գիտեմ ես ,
 Եւ զոր շքեղ քաջարուծեամբք է 'ի նոցունց յուսալ մեզ :
 Եւլ յինչ աղէ յանկիցին այնք , բայց 'ի բարիս անցաւոր ,
 Օրս հետամուտ վանեն վըտանգք , հոգք վրդովեն բիւրաւոր :
 Բառնայ 'ի մէնջ մահ զամենայն , բաղդին եդան խաղալիկ .
 Եւսօր 'ի գահ արքունական , վաղիւն 'ի տիղմ թաւալիմք :
 Որչափ 'ի ծայրն հասեալք փառաց , դոյնչափ դրժգոհք յաճախեն .
 Վանի նուազունք 'ի կայսերացդ յիւրեանց 'ի փառս վայելեն :
 Եւ , է և յիս փառաց անձուկ ազնււագոյն և վըսեմ ,
 Կորստական այդ մեծուծիւնք . զանանցականն ես խընդրեմ .
 Օերջանկուծիւն աներկեւան , ոյր ոչ չափ է ոչ սահման ,
 Զար նախանձու գեր 'ի վերոյ , անմիտ դիպացն հաճուծեան :
 Ս'ի թանկագնոյ գնիցեմ ես զայն ընդ աղցաւոր այս կենաց ,
 Որ թէ կանուխ թէ անազան բարձցի յինէն յոչ կամաց .
 Ոյր փախըստեայ են սուղ վայելքն և կեղակարծ ապագայն :
 Պաշ . Վրիստոնէիցդ այդ ձեր ահա երազք են յոյժ ծաղրական .
 Տես արդ ցորվայր առասպելեացդ հրապոյրք ըզձեզ կախարդեն .
 Երիւնդ թեթեւ թըւի ձեզ քաղցր այնց վայելից փոխարէն :
 Եւլ ինքնիշխան միթէ արեանդ իցէք տնօրէն դուք և տէր
 Եւ առանգուծեան պէս և ըզկեանս 'ի պարգևի առեալ ձեր :
 Ոչ կենսատու ձեզ օրն և ժամ ետ և պարտուց ձեզ պայման .
 Օր աշխարհի և պետուծեան և արքայի պարտիք զայն :
 Պող . Ստադիւր ես զայն դնեմ 'ի մահ վասըն նոցա 'ի մարտի .
 Գիտեմ ըզժամն և ըզպայման և թէ որ փառք են անտի :
 Գեկոսի հարց պարծանքն 'ի գով առեալ ահա մեծապէս ,
 Եւ սիրելի անունն այն ցարդ հռոմայեցւոցդ եղեալ ձեզ ,
 Սեցեակ դարուց 'ի գլուխ նա արդ վերամբարձաւ ինքնակալ :
 Սան արքայի և աշխարհի զարիւնս այո պարտիմ տալ .
 Եւլ առաւել վասն Եստուծոյ յորմէ առի զայն պարգև :
 Թէ 'ի վերայ արքայի մահն է բաղդ շքեղ արդարեւ ,
 Վանիօն ևս վասն Եստուծոյ թէ զանձն 'ի մահ ոք տացէ :
 Պաշ . Եւհ , որ Եստուած
 Պող . Օգոյշ , Պաւլինէ , բանից քոց արդ նա լըսէ .
 Եւ չէ իսկ ինքն հանգոյն կըռոցդ աստուած չընչին թարմատար ,
 Խուլ անըզգայ , համր և անշարժ , յոտից ձեռաց ապիկար .
 Ոչ ոսկեձոյլ կամ 'ի քարէ ըստ քիմըս ձեր կոփածոյ :
 Վրիստոնէիցն է նա Եստուած , նա և իմ է , նա և քո :
 Յերկինս 'ի վեր չիք այլ Եստուած և ոչ յերկիր 'ի խոնարհ :
 Պաշ . Երկըրպագու նըմա հոգւով՝ ցոյցս 'ի վերոյ մի ինչ տար :
 Պող . Օր քրիստոնեայ և դիցապաշտ համանգամայն ես իցեմ :

- Պաշլ . Կեղծեա վայր մի , մինչև Սեւեր գնացէ 'ի մէջ տարադէմ ,
Լա հօրն իմոյ լիցի սպառնէ ըզգութն 'ի քեզ ցուցանել :
- Պող . Ինձ ցանկալի է Լստուծոյն իմ գրթութեան հանդիպել ,
Որ կենցաղոյս 'ի վրտանգաց յափրշտակեալ զիս վերոյ ,
Ոչ ինձ թողու իսկ ժամանակ յետս ընդ կրրունկն հայելոյ ,
Հասպարիսիս 'ի ծայր կապէ ինձ գրթութեամբ ըզպըսակ ,
Հանդորր ածէ նաւահանգիստ 'ի նախկին շունչ յաջողակ ,
Ի զնորնծայս յաւազանէն յուղարկելով առ 'ի մահ :
Լ՛հ , Պաւլինէ , թէ գիտէիր զինչ կեանքս իցեն դիւրասահ ,
Լա որ մահուս այս բարեբաղդ քաղցր վայելք յաջորդեն . . .
Լա ծածկելոց գանձուց այս ճառք , ո՛հ , այնոցիկ 'ի զուր են ,
Օ որոց չեւ ևս մատն Լստուծոյ հրաշից ըզսիրտսն շարժեաց :
- Պաշլ . Ով դու անգութ , ժամէ ապա զի զկիրս անձին մերկացայց ,
Լա զապաշնորհ հարից ըզսիրտդ 'ի կրշտամբանս արժանի .
Լա իցէ քո հարսանեկան սէր զոր եղերն ինձ երդմնի
Լա կարեկից այս գութ սրբտիդ զոր ցուցանես ինձ հիգիս .
Լըռեցի ցարդ զողորմ աղէտս յոր յուսահատ թողուս զիս .
Լարծեալ թէ շատ իսկ սէր ընդ իմ լիցի առ քեզ բարեխօս
Որ զի և չեն իսկ ինձ հաճոյ աղապատանք բրննաղբօս :
Լա սերն անկեղծ զոր մըշտատեւ խոստացար ինձ վայելուչ
Լա զոր կալայն ես միշտ առ քեզ 'ի սերտ սրբաէ համաշունչ ,
Լիցէ թէ գէթ 'ի լքանելդ զիս այսպէս առ 'ի մահ
Հօղեսցէ կաթ մի արտասուաց կամ 'ի սրբտէ տայ մի անհ :
Լքանես զիս , ով ապաշնորհ , և խայտալով լքանես .
Ոչ ինչ ծածկեալ ըզխինդ սրբտիդ ' ինձ ակներե ցուցանես :
Սիրտդ անընդոստ և անըզգայ դառն աղետիցս 'ի կրկիծ ,
Լքանկութիւն ցնոր է անձին , ոյր չիցեմ ես մասնակից :
Լա հարսանեաց մեր արգասիք իցէ տաղտուկդ այդ յինէն .
Հարսն ընծայեալ քեզ Պաւլինէ և ատեցաւ նա 'ի քէն :
- Պող . Եղովկ :
- Պաշլ . Որպէս գրթուարաշարժ բերին շրթունք յայդ եղովկ .
Լա զի զըղջման տեսցին 'ի քեզ բարեգուշակ արտասուք ,
Լա բռնաղբօսն իսկ ինձ քաղցր է գորովաշարժ առ 'ի տես . . .
Վաշ վաշ , ահա յուզեցան գութք , արտօսը հոսէ ընդ երես :
- Պող . Հոսեն այո աչքս արտասուս , և ո՞ տայր այնց զօրութիւն
Օ ընդդիմամարտ խրստացելոյ կակղել սրբտիդ պընդութիւն :
Ողորմ աղէտքն յոր զքեզ թողում , արտասուաց գոն արժանիք ,
Օ որ կարեկից հոսէ գթութիւն սիրոյն իմոյ հաւաստիք :
Լա թէ երբէք մարթեն Լրկինք լինել ցաւոց ընդունակ ,
Լացից ես անդ , ըզքեզ լացից բուռն յաղիտիցդ յիշատակ :
Լայց յօթեանս անդ լուսաճեմ երանաւէտ խորանաց
Լարութեանց տէրն արգարադատ թ' յողոք զիջցի մաղթանաց ,
Լա հաճեսցի ընդունել զիղձս հարսանեկան իմ սիրոյս ,
Ի զկուրութեանդ քո խաւար փարատեսցէ յիւրն 'ի լցս :
Լա , ով Տէր , զայդ 'ի քումմէ բարութենէդ յուսամ ես ,
Օ ի արժան իսկ քրիստոնէի իւր ուղղութեանցն է հանդէս :
Լազմահարուստ բարեաց 'ի ձիրս 'ի քէն շնորհիւրդ պըճնեալ ,
Լնձանաչող քեզ գոլ չկարէ , ոչ 'ի սիրոյդ բացեայ կալ ,

Եւ ոչ անշնչօ կալ 'ի դժոխոց սարիս գերի վատշուէր՝

Օրնեալ ընդ խիստ նոցին լըծով և 'ի նրմին մեռանել :

Պաշլ . Օ ինչ բանքդ իցեն , ով վատաբախտ , և զինչ շըրթունքդ ինձ մաղթեն :

Պող . Օ որ բովանդակ արեանս 'ի գին ցանկամ առնուլ փոխարէն :

Պաշլ . Եւ մանաւանդ . . .

Պող . Ս'ի վայրասար ըստահակիր դժկամակ .

Ինակընկալ շարժէ Իստուած ընկճեալ ըզսիրտըս վայրագ :

Չի ևս իցէ երանաւէտ օրն այն և ժամ հասեալ արդ ,

Հասցէ անշուշտ . այլ երբն և ուր գիտել այժմէն չէ ինձ մարթ :

Պաշլ . Թող ըզցնորս և ցոյց ըզսէրդ :

Պող . Իզքեզ սիրեմ ես այո ,

Իստորև յոյժ քան զԻստուածն իմ , այլ քան զինքնըս գեր վերոյ :

Պաշլ . Երգմենցուցեալ ըզքեզ յայդ սէր , մի գիս անխնամ լըքաներ :

Պող . Երգմենցուցեալ ըզքեզ յիմ սէր , լիջիր ուղւոյս իմ ընկեր :

Պաշլ . Ոչ շատ իցէ թողուլդ այսպէս , պատրել իսկ զիս հընարիս :

Պող . Ոչ շատ է ելս միայն յերկինս , ցանկամ լինել քեզ ընդ իս :

Պաշլ . Օ առանցելոյ են այդ ցընորք :

Պող . Արշմարտութիւն անարատ :

Պաշլ . Ով կուրութիւն տարօրինակ :

Պող . Երկնանըշտլ ճառագայթ :

Պաշլ . Եւ յդպէս ուրեմն ընտրես ըզմահ քան զՊաւլինեայ դու ըզսէր :

Պող . Եւ յդպէս ուրեմն ընտրես զաշխարհ քան զբարութեանց դու ըզՏէր :

Պաշլ . Երթ խըստասիրտ դիմեաց 'ի մահ , բնաւ իսկ դու զիս ոչ սիրես :

Պող . Կաց բարեբաղդ դու 'ի յերկրի , և յանդորրու զիս թողցես :

Պաշլ . Թողից այո , յանդորրու այժմ ըզքեզ թողից , հանդարտ լեր .

Իհա երթամ . . .

ՏԵՍԱՐԱՆ Դ .

Պողիկ . Պաշլիկ , Սեւեր .

Պաշլ . Եւ քո առ ինչ գալուստդ այսրէն , ով Սեւեր :

Իգնուական ոգիդ վեհանձն , ո՞ որ երբէք հաւատայր ,

Թէ նուաստացի մինչև ցայս վայր գըլորելումն ոտընհար :

Պող . Օ առաքինւոյ չըքնաղ հանդէս թըշնամանես Պաւլինէ .

Իգաչանաց իմոց 'ի լուր զիջեալ նա ինձ այց առնէ :

Տըմարդութեանս իմոյ այսմիկ , մաղթեմ դու , Տէր իմ , ներեա .

Օ որ՝ պարաւանդ 'ի կապանաց՝ բըռնադատեալ ես բերայ :

Պանծու մեծի ժառանգաւոր ըստ ոչ իմոց արժանեաց

Թոյլ արա ինձ , զի չեմ մեռեալ ինքնին զաւանդն 'ի քեզ տաց :

Եւ զոր ուրեք երբէք երկինք մեծափարթամ օժտեցին

Չընաշխարհիկ 'ի գեղ 'ի զարդ առաքինի ամուսին ,

Ինն արժանւոյ թողից 'ի ձեռս և քաջազնին 'ի քաջաց ,

Օ որ մեծն հըռովմ ծընաւ երբէք 'ի սքանչացումն ազգաց :

Իրժանաւոր դու գոս փեսայ , նա հարսն է քեզ արժանի ,

Ս'ի յամուսնոյն ձօնեալ ձեռաց արհամարհ քեզ թըւեսցի :

Թէ զձեզ կենօք նա բաժանեաց , մահուամբն ահա կըցորդէ .

Եւ գեղանի բոցոյդ փաղփիւն մի ինչ այնու նըւազէ :
 Եւմա դու զսիրտորդ քո մատո , քեզ զիւրն ընկալ լըծակից ,
 Խարեբաստ միշտ կեցջիք անբաժ և մահ մեռջիք հանգոյն ինձ :
 Երկաքանչիւր ձեզ Պողիկտոս մաղթէ բարեաց զայս վայել :
 ()ն երթիցուք արդ առ 'ի մահ , չմնայ ինձ այլ ինչ ասել :
 Եւրիք պահպանք , իմն ամենայն վըճարեալ է ձեզ մընամ :
 (Ելանէ ընդ զօրականացն :)

ՏԵՍԱՐԱՆ Ե .

Սեւեր . Պաշինէ :

Սեւ . Ինդ կուրուծիւն նորա յապուշ հարեալ ես յոյժ զարմանամ ,
 Ինդարձ մըտացն հաստատուծիւն տարօրինակ և անլուր ,
 Թերահաւատ զիս լըսեւեացս առնեն 'ի լուր բանիցն իւր :
 Սիրտ որ 'ի սէր քո վառեցաւ , (և որ այն սիրտ վայրենի ,
 Որոյ գամ մի յառեալ 'ի գեղդ և ոչ 'ի սէր պարանի) ,
 Եւ որ 'ի քէն սիրեալ փոխան , այն ինչ գեղոյդ տիրանայ ,
 Թողու անցաւ ըզսիրեւիդ և ոսոխին տեղի տայ :
 Եւ իբրու այն թէ բոց սիրոյդ աղիտալից նուէր է
 Կարուի իսկ առեալ իւրում նախանձորդին ընծայէ :
 Ոհ արդարեւ քրիստոնէիցդ աղանդն է յոյժ մոլեկան .
 Եւ կամ թէ ոչ՝ երջանկուծեանց նոցա երբէք չիք սահման .
 Եւրոց 'ի յոյս վառեալ նոցա արիաբար ընդոտնեն ,
 Օորս և 'ի գին արքունական թագին գընեն էր օրէն :
 Ինձ թէ բաղդին հաճոյքն 'ի հաշտ ակնարկէին յօժընդակ՝
 Սարձահատոյց քո հարսնուծեամբըդ պըսակել զիմ վաստակ ,
 Վհան զլուսավառ աչացըդ գեղ պաշտէի ես և ոչ ինչ ,
 Եւրա իմ տէր և թագաւոր , նոյնք և աստուած էին ինձ :
 Եւ նախ յաճիւն լուծեալ 'ի հուր , դնէի փոշի 'ի կոխան ,
 Եւ ապա թէ . . .

Պաշ . Կացցեն այդ բանք , և մի յորդէն ըստ արժան .
 Եւ մի բորբոքդ այդ 'ի նախկին սիրոյդ խանձեալ 'ի հրդեհ ,
 Երկոցուն իսկ մեզ 'ի վըտանգ ճարակեսցի դըժպատեհ :
 Շատ իսկ Սեւեր , քաջածանօթ է քեզ վաղուց Պաւլինէ ,
 Եւ այց արդ կենացն իմ Պողիկտեայ վախճան առ դուրս հասանէ .
 Սայրիկ մի այլ , և մեզ՝ աւանդ , ոչ ևս իցէ Պողիկտոս :
 Եւրենէն դու թէպէտ անսպարտ , սակայն պատճառք մահուն գոս :
 Թէ 'ի հըապոյրս նախկին սիրոյդ դիւրահաւան սիրտդ յօժար ,
 Սահուամբ նորա յուսայ յանձին յըղձիցն իւրոց 'ի հընար .
 Չիք , գիտասջիր , մահ դըժընդակ , յոր ոչ երթայց անվեհեր ,
 Ոչ արհաւիրք խիստ դըժոխոց , ոյց ոչ տարայց վըշտամբեր ,
 Եւ մի փառացս ածից մըռայլ՝ ձեռնն տուեալ հարսնուծեան
 Եւ իմ որ պատճառք՝ թէ և փոքու՝ կաց եղկեւոյն կորըստեան :
 Եւ թէ այդպէս վատուծեան ինչ կարծիս զինէն դու բերցես ,
 Սէրն իմ նախկին յոր յուսացարն յատեւուծիւն դարձցի քեզ :
 Թէ ես վեհանձն՝ ծն անփոփոխ լեր 'ի նըմին մինչ 'ի սպառ .
 Եւ քէն արդ հայրն իմ ակն ածէ , տայ զոր ինդրեան անպատճառ .

Լա զՊողիկտոս, գիտեա և զայս, քո վասն 'ի սպանդ տայ այսօր :
 Եր եղկեւոյն դու կեցուցիչ և ապաւէն մեծազօր :
 Եւ թեթեւ ինչ իցէ, գիտեմ, խընդիրս իմ այս առ 'ի քէն :
 Եւ մեծագոյն ճրգանցդ 'ի չափ փառք մեծագոյն քեզ յորդէն :
 Եւ ցո զոսոխդ նախանձընդդէմ, լեալ մախանաց յաղթական ,
 Եւ քանի այս պերճ հանդէս քեզ միայնոյ սեպհական :
 Իսկ թէ փառաց տենչ և համբաւ չիցեն քեզ շատ 'ի գըրգիւ ,
 Զէ դոյզն և այն՝ զի սիրուհին զոր դուն այնչափ սիրէիր ,
 Եւ յոր ողոր այժմ իսկ թերեւ չէ անընդոստ սիրտ քոյին ,
 Եւ եծանձնութեան քում շնորհապարտ զիւրն ընկալցի անձկալին :
 Եւ քեզ և այս լից՝ 'ի վերջէ զի դու ինքն ես Սեւերոս :
 Եւ նասցիր ողջամբ , զի՛նչ թէ 'նտրեսցես՝ տես առանձինն անըզբօս :
 Եւ թէ չիցես դու այնպիսի որպէս ըզքէն յուսամ ես ,
 Եւ ևս իցէ չգիտել ինձ զայն՝ զի մեծարոյ ինձ իցես : (Ելանէ :)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Կնճրատր կապիկ :

ՊԱՆՂՂԻԱՅԻ բնապատմին մէկը դէպ
 'ի Սիւս ճամբորդութեան ելլելով՝ հե-
 տեալ դիպուածը կը պատմէ աս կեն-
 դանոյս վրայօք . “ Եւ մառ ատեն Վօ-
 չինչին գտնուելով, գեղեցիկ օր մը առ-
 տուանց կանուխ խրճթէս ելայ որ եր-
 թամ Բեքդի ըսուած գետին եզելքը
 ժուռ գամ, որ քիչ մը վար մեծ լճի
 մը մէջ կը թափէր : Հոն տեղուանք
 գեղեցիկ անտառ մը կար որ մինչև գետը
 կը տարածուէր . ու առաւօտեան ա-
 նուշ քամի մը փչելով բլուրներուն ծայ-
 րերէն, և ծառերուն տերեւները մեղ-
 միկ շարժելով, սրտիս ախորժելի զովու-
 թիւն մը կուտար : Եւ այս միայնու-
 թեան մէջ երբոր հայրենեայս քաղցր
 յիշատակները միտքս առեր էին՝ մէյ-
 մ'ալ յանկարծակի պամպուներուն մէ-
 ջէն ձայն մը լսելով բոլորովին միտքս
 չփոթեցաւ :

Ինծի կ'երեւնար որ բարկացած մէկը
 սպառնալից ձայնով մը ինծի Գա-հօ
 Գա-հօ կը կանչէր, որ ինծի աննշան
 դալով՝ կարծեցի որ տեղացոյ լեզուով

բառ մըն է : Հազիւ թէ աս ձայնս լսուե-
 ցաւ, մէյմ'ալ անտառին ամէն դիէն
 սկսան ասոր նման ձայներ լսուիլ ու հետ
 զհետէ ինծի մօտենալ : () արմացած ա-
 չուրներս անտառին ճամբաներուն վրայ
 կը պտըտցնէի թէ ինչ պիտի ըլլայ ,
 բայց բան մ'ալ չէի տեսներ ու անդա-
 դար նոյն ահուշի ձայնը ականջս կը խաչ-
 թէր : Սկսաւ ինծի վախ մը գալ և երբ
 կը մտածէի շուտով մը այն տեղէն քա-
 շուիլ, մէյմ'ալ տեսնեմ որ ծառերուն
 մէջէն անծանօթ կենդանի մը դուրս ե-
 լաւ ցատքըտելով ու այլանդակ շարժ-
 մունքներով, ու երեսուն քայլ ինծմէ
 հեռու կանկ առաւ : Եւ չխոյժ ու կրա-
 կոտ կ'երեւար, երեսը կունքմտած և
 կունակը կուզ ելած . ամենևին պզտիկ
 ծերուկի մը նման . մեծութիւնը իրեք
 ու կէս ոտքէն աւելի չէր . ձեռուրները
 երկայն ու բարակ, ծնկուրները քիչ մը
 կորացած, ու աչուրները վառվռուն :
 Սրայի մորթը կարմրի զարկած դեղին
 էր . թուշը երկայն ու մոխրագոյն մօ-
 լուքով մը ծածկած էր, ու երկայն պոչ
 մ'ալ ունէր որ քալելու ատենը գետի-
 նը կ'աւլէր : Եւ այց ամենէն սարսափե-
 լի և խնտալու բանը իրենքիթն էր . որն
 որ վեց բթաչափէն աւելի երկայն ա-
 ղեղնաձև եղջիւրի պէս դուրս ցցուած
 էր և ածուխի պէս սև էր, և այնպիսի
 դրքով բերնին վրձնէր էր որ ամենևին